



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 03.06.2016թ. ԹԻՎ 172-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԵՎ ՎԿԱՅԱՎԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ» ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 3-րդ կետի, 3-րդ և 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 172-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգում (այսուհետ՝ **Կարգ**) փոփոխություն և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Կարգի 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22. Պալատի նախագահի որոշմամբ կարող է սահմանվել արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի (այսուհետ՝ Պլաստիկ քարտ) ձևը և նկարագրությունը: Պլաստիկ քարտը փաստաբանին տրամադրվում է կամավորության սկզբունքով: Պլաստիկ քարտ ստանալը փաստաբանին չի զրկում իր վկայականը և արտոնագիրը զուգահեռ օգտագործելու իրավունքից:»:

2. Կարգը լրացնել նոր՝ 23-րդ կետով, հետևյալ խմբագրությամբ.

«23. Պլաստիկ քարտը փաստաբանին տրամադրվում է միայն դիմումի հիման վրա՝ քարտի արժեքի փոխհատուցմամբ, բացառությամբ սույն կետում նշված դեպքերի: Առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու մասին դիմում ներկայացրած փաստաբանի հավակնորդին Պլաստիկ քարտը տրամադրվում է անվճար: 2018 թվականի մարտի 1-ի դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբաններին Պլաստիկ քարտը տրամադրվում է

անվճար՝ Պլաստիկ քարտ ստանալու մասին դիմումը մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը (ներառյալ) ներկայացնելու դեպքում:»:

3. Կարգը լրացնել նոր՝ 24-րդ կետով, հետևյալ խմբագրությամբ.

«24. Պլաստիկ քարտը փաստաբանին, որպես կանոն, տրամադրվում է դիմումը ներկայացնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում: Բացառիկ դեպքերում, Պլաստիկ քարտի տպագրության հետ կապված օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ Պլաստիկ քարտի տրամադրման՝ սույն կետում նշված ժամկետը կարող է երկարաձգվել:»:

4. Կարգը լրացնել նոր՝ 25-րդ կետով, հետևյալ խմբագրությամբ.

«25. Պլաստիկ քարտի տպագրությունն ապահովում է Պալատի հետ համապատասխան պայմանագրի հիման վրա համագործակցող մասնագիտացված կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն):»:

5. Կարգը լրացնել նոր՝ 26-րդ կետով, հետևյալ խմբագրությամբ.

«26. Պլաստիկ քարտի արժեքը որոշվում է Պալատի և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով: Ընդ որում՝ պայմանագրով, հաշվի առնելով քարտի տպագրության ծախսերը, կարող են սահմանվել տարբեր սակագներ՝ քարտի անհատական և խմբային պատվերների համար: Փաստաբանը Պլաստիկ քարտի արժեքն անմիջապես վճարում է Կազմակերպությանը:»:

6. Կարգը լրացնել նոր՝ 27-րդ կետով, հետևյալ խմբագրությամբ.

«27. Պլաստիկ քարտի տրամադրման դիմումին կից փաստաբանը պետք է էլեկտրոնային կրիչով ներկայացնի 30X25 մմ չափսերից ոչ պակաս գունավոր լուսանկար, իսկ հետագայում՝ նաև Կազմակերպությանը Պլաստիկ քարտի արժեքը վճարելու վերաբերյալ համապատասխան հաշվարկային փաստաթղթի օրինակը:»:

7. Սահմանել, որ սույն որոշմամբ կատարված փոփոխությունն ու լրացումներն ուժի մեջ են մտնում 2018 թվականի մարտի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

01 մարտի 2018թ.
թիվ 106-L
ք. Երևան